## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» սեպտեմբերի, 2018թ.

Մասնակցում էին՝ ժամը՝ 11:00

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

1. Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2018թ.-ի թիվ ԳԲԽ-ԷԱ-2018/97 որոշումը՝ հանձնաժողովը որոշեց՝

- Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած
- Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

3) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. հոկտեմբերի 1-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **2018թ. հոկտեմբերի 3-ին, ժամը 11:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ ---------------------- Կարեն Մելքոնյան

---------------------- Էդգար Տոնականյան

---------------------- Արթուր Ծամրագյան

Քարտուղար՝ ---------------------- Օֆելյա Ասատրյան